ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ

DOI: 10.52174/2579-2989_2021_4_43

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ (ՍԷԿՏ), համավարակ, կացության և հանրային սննդի կազմակերպում, վճարային հաշվեկշիռ*

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է, 2019 թ.-ից՝ կառավարման ամբիոնի ասիստենտ: 100-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ հինգ մենագրության և երեք ուսումնական ձեռնարկների հեղինակ է և համահեղինակ:

ORCID - https://orcid.org/0000-0002-4131-6322
Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

COVID-19 համավարակի հետևանքով զբոսաշրջության ոլորտն էական վնասներ է կրել ամբողջ աշխարհում՝ չշրջանցելով նաև Հայաստանը: 2020 թ. ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում կազմել է 216.8 մլրդ դրամ կամ 446.9 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ 3.4%-ը)՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 75%-ով: Զբոսաշրջությունն ապահովել է ընդհանուր զբաղվածության 11.2%-ը կամ 107400 աշխատատեղ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 22%-ով: 2021 թ. ոլորտը սկսել է աստիճանաբար աշխուժանալ: Ըստ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով (ՍԷԿՏ) ստացված տվյալների՝ այս տարվա հունվար-հունիսին ՀՀ է այցելել 239263 ներգնա զբոսաշրջիկ, իսկ հունվար-օգոստոս ամիսներին՝ 488558 ներգնա զբոսաշրջիկ, ներքին զբոսաշրջիկների թիվն առաջին կիսամյակում կազմել է 216130 մարդ: ՀՀ կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը նույն ժամանակահատվածում եղել է 72239.2 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 67.3%-ով:

Հաշվի առնելով քննարկվող ոլորտի էական նշանակությունը մեր երկրի սոցիալ-տնտեսական համակարգում՝ ներքին և ներգնա զբոսաշրջության խթանման համար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան մարքեթինգային միջոցառումներ, մասնավորապես՝ համացանցով և սոցիալական ցանցերով տարածել գովազդ, մշակել տարբեր տեսակի տուրփաթեթներ՝ ներառելով զբոսաշրջության զանազան տեսակները և այլն:

COVID-19 համավարակի հետևանքով 2020 թ. զբոսաշրջության ոլորտն ամբողջ

աշխարհում ահռելի վնասներ է կրել: 2021 թ.-ին, պատվաստանյութերի տարածմանը զուգընթաց, ճանապարհորդու թյուններն աստիճանաբար սկսել են վերականգնվել: Իհարկե, դեռ վաղ է հստակ կերպով գնահատել, թե համաշխարհային մակարդակով ոլորտը երբ ամբողջապես կվերականգնվի՝ գերազանցելով 2019 թ. գրանցված ցուցանիշները: Բանն այն է, որ համավարակը դեռ չի ավարտվել, իսկ նոր շտամների ի հայտ գալը չափազանց մտահոգիչ է և կասկածի տակ է դնում բնականոն կյանքին շուտ վերադառնալու հնարավորությունները:

Համաձայն Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ԶՀԿ) տվյալների՝ ***միջազգային զբոսաշրջիկների թիվն աշխարհում 2019 թ. կազմել է շուրջ 1.5 մլրդ մարդ[1], որը, ըստ կանխատեսումների, 2030 թ. պետք է հասներ 1,8 միլիարդի[2]:*** Մինչդեռ համավարակի հետևանքով ***2020 թ. միջազգային զբոսաշրջիկների թիվն աշխարհում կազմեց 381 մլն մարդ՝ նվազելով 74%-ով[3]:***

ԶՀԿ-ն 2021-2024 թթ. համար դիտարկում է որոշ սցենարներ՝ հաշվի առնելով մի շարք գործոններ՝ ճանապարհորդելու սահմանափակումների աստիճանական վերացում, զբոսաշրջիկների վստահության բարելավման տեմպ և տնտեսական պայմաններ: *Ըստ առաջին սցենարի՝ 2019 թ. ցուցանիշի վերականգնումը կլինի 2023 թ. կեսերին, ըստ երկրորդ սցենարի՝ 2023 թ. վերջին և ըստ երրորդ սցենարի՝ 2024 թ. վերջին:* Համաձայն ԶՀԿ-ի՝ ոլորտի վերականգնումը կսկսվի 2021 թ.-ից, սակայն 2021 և 2022 թթ. զբոսաշրջային այցելությունների ցուցանիշը դեռևս ցածր կլինի 2019 թ. արձանագրվածից[4]:

Ըստ Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի հրապարակումների՝ ***զբոսաշրջության համախառն ներդրումը համաշխարհային ՀՆԱ-ում 2020 թ. կազմել է 4671 մլրդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ 5.5%-ը),*** այն դեպքում, երբ ***2019 թ. այդ թիվը եղել էր 9170 մլրդ-ի (ՀՆԱ 10.4%-ը):*** Նույն տարում զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի թիվը կազմել է 272 մլն մարդ՝ նախորդ տարվա 334 մլն-ի դիմաց, նվազելով 18.5%-ով կամ 62 մլն-ով[5]:

ՀՆԱ-ում զբոսաշրջության համախառն ներդրման ամենամեծ անկումը գրանցվել է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում՝ 53.7% (աղյուսակ 1):

Աղյուսակ 2-ում արտացոլված են մի

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ՝ ըստ տարածաշրջանների, 2019-2020 թթ.[6]

	Զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում, մլրդ ԱՄՆ դոլար		Զբոսաշրջության ոլորտի աշխատատեղեր, մլն մարդ	
	2019 թ.	2020 թ.	2019 թ.	2020 թ.
Ամերիկա	2482	1429	45.2	33.4
Աֆրիկա	169	86	24.7	17.5
Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան	3061	1417	185.1	151
Եվրոպա	2191	1065	38.5	34.9
Մերձավոր Արևելք	270	132	6.9	5.7

[1] UNWTO World Tourism Barometer and Statistical Annex, January 2020,18(1), p. 1, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.1

[2] Tourism Towards 2030 / Global Overview, Advance edition presented at UNWTO 19th General Assembly – 10 October 2011, p. 15, https://www.globalwellnesssummit.com/wp-content/uploads/Industry-Research/Global/2011_UNWTO_Tourism_Towards_2030.pdf

[3] 2020: Worst year in tourism history with 1 billion fewer international arrivals, https://www.unwto.org/news/2020-worst-year-in-tourism-history-with-1-billion-fewer-international-arrivals

[4] World Tourism Barometer, Volume 18, Issue 5, August/September 2020, UNWTO, pp. 1, 5, 21, https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.5

[5] Global Economic Impact & Trends 2021, pp. 4-5, World Travel & Tourism Council, https://wttc.org/Portals/0/Documents/Reports/2021/Global%20Economic%20Impact%20and%20Trends%202021.pdf?ver=2021-07-01-114957-177

[6] Նույն տեղում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ՝ ըստ երկրների, 2019-2020 թթ.[7]

	Զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում, մլրդ ԱՄՆ դոլար		Ներքին զբոսաշրջիկների ծախսեր, մլրդ ԱՄՆ դոլար		Ներգնա զբոսաշրջիկների ծախսեր, մլրդ ԱՄՆ դոլար	
	2019 թ.	2020 թ.	2019 թ.	2020 թ.	2019 թ.	2020 թ.
ԱՄՆ	1869.7	1103.7	1026.0	645.6	181.2	42.2
Չինաստան	1665.6	667.2	836.2	328.0	132.3	44.6
Գերմանիա	393.1	208.8	323.4	170.5	53.4	22.5
Ճապոնիա	373.0	234.9	212.6	148.3	49.1	8.4
Միացյալ Թագավորություն	305.0	115.0	205.5	75.6	45.7	13.0
Իտալիա	269.8	132.2	163.0	82.1	52.1	19.8
Ֆրանսիա	240.5	123.2	131.8	66.2	69.0	32.5
Իսպանիա	202.1	75.4	68.4	33.7	89.8	19.6
Հնդկաստան	191.3	121.9	140.1	97.1	30.8	12.0

քանի երկրների՝ ՀՆԱ-ում զբոսաշրջության համախառն ներդրման, ինչպես նաև ներքին և ներգնա զբոսաշրջային ծախսերի ծավալները:

Այժմ ներկայացնենք ՀՀ զբոսաշրջության ոլորտի ցուցանիշները:

Ըստ Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի հրապարակումների՝ ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում 2019 թ. կազմել է 872.1 մլրդ դրամ կամ 1.8 մլրդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ 12.9%-ը)՝ ապահովելով ընդհանուր զբաղվածության 13.8%-ը կամ 137800 աշխատատեղ: ***2020 թ. ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում կազմել է 216.8 մլրդ դրամ կամ 446.9 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ 3.4%-ը)՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 75%-ով: Զբոսաշրջությունն ապահովել է ընդհանուր զբաղվածության 11.2%-ը կամ 107400 աշխատատեղ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 22%-ով:*** Ներգնա զբոսաշրջիկների ծախսերը ՀՀ-ում կազմել են 126.1 մլրդ դրամ (260.0 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա 719.7 մլրդ դրամի (1484.1 մլն ԱՄՆ դոլար) դիմաց նվազելով 82.5%-ով, իսկ ներքին զբոսաշրջիկների կատարած ծախսերը՝ 61.5 մլրդ դրամ (126.7 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա 109.7 մլրդ դրամի (226.1 մլն ԱՄՆ դոլար) դիմաց նվազելով 44%-ով[8]:

Ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ ***2019 թ. ՀՀ է ժամանել 1894377 զբոսաշրջիկ*** (2018 թ. համեմատ թիվն աճել է 14.7%-ով), իսկ ՀՀ-ից մեկնել՝ 1867888-ը[9]: ***2020 թ. համավարակի պայմաններում ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակը կազմել է 375216՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 80%-ով:*** 2020 թ. ՀՀ-ից մեկնել է 346093 արտագնա զբոսաշրջիկ (գծապատկեր 1)[10]:

2018 թ. ապրիլի 12-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումներին հավանություն տալու մասին» N14 արձանագրային որոշումը[11], որի նպատակն է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի

[7] Global Economic Impact & Trends 2021, pp. 22-23, World Travel & Tourism Council, https://wttc.org/Portals/0/Documents/Reports/2021/Global%20Economic%20Impact%20and%20Trends%202021.pdf?ver=2021-07-01-114957-177

[8] Armenia 2021, Annual research: Key highlights, p. 1, https://wttc.org/Research/Economic-Impact

[9] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 139, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf

[10] ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 143, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_421.pdf

[11] ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, 12-ը ապրիլի, 2018 թ., N14, «Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումներին հավանություն տալու մասին», http://www.irtek.am/views/act.aspx?aid=94631



	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Ներգնա զբոսաշրջիկներ	729,2	832,7	963,0	1,081	1,203	1,192	1,259	1,494	1,651	1,894	375,2
Արտագնա զբոսաշրջիկներ	715,4	830,4	965,3	1,080	1,198	1,187	1,262	1,481	1,622	1,867	346,0

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը, 2010-2020 թթ.[12]

(ՍԷԿՏ) օգնությամբ բարելավել զբոսաշրջության վիճակագրությունը՝ ապահովելով տվյալներ՝ ըստ քաղաքացիության, սեռատարիքային խմբերի, սահմանային անցման կետերի, կրկնակի այցելությունների քանակի:

Համաձայն ՍԷԿՏ-ով ստացված տվյալների՝ 2021 թ. հունվար-մարտին ՀՀ է այցելել 86524 ներգնա զբոսաշրջիկ[13], իսկ ապրիլ-հունիսին՝ 152739, այսինքն՝ առաջին կիսամյակում՝ 239263 մարդ՝ 2020 թ. 307590-ի համեմատ[14] (նվազել է 22%-ով): 2021 թ. հուլիս ամսին ՀՀ է այցելել 106127, իսկ օգոստոսին՝ 143168 զբոսաշրջիկ, այսինքն 2021 թ. հունվար-օգոստոս ամիսներին ներգնա զբոսաշրջիկների թիվը կազմել է 488558 մարդ[15]: 2021 թ. առաջին կիսամյակում ՀՀ-ից մեկնել է 115546 արտագնա զբոսաշրջիկ՝ 2020 թ. 274435-ի դիմաց[16] (նվազել է 58%-ով):

ՀՀ այցելած զբոսաշրջիկների բաշխվածությունն ըստ սեռատարիքային կազմի ներկայացված է աղյուսակ 3-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, ՀՀ այցելող զբոսաշրջիկների մեջ գերակշռել են տղամարդիկ, առավելապես՝ 36-63 տարեկան:

Ըստ քաղաքացիության՝ ՀՀ ներգնա զբոսաշրջիկների մեծ մասը ՌԴ, Իրանի, Վրաստանի, ինչպես նաև Հայաստանի քաղաքացի է: Աղյուսակ 4-ում մի քանի երկրների օրինակով ներկայացված են

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՀՀ ներգնա զբոսաշրջիկներն ըստ սեռատարիքային կազմի, 2020-2021 թթ.[17]

Ըստ տարիքային խմբերի	2020 թ. հունվար-հունիս			2021 թ. հունվար-հունիս		
	Ըստ սեռի					
	Ընդամենը	Կին	Տղամարդ	Ընդամենը	Կին	Տղամարդ
Ընդամենը	307590	109117	198473	239263	80395	158868
Մինչև 15 տարեկան	24735	11663	13072	14683	7003	7680
16-17 տարեկան	2941	1444	1497	1557	776	781
18-25 տարեկան	28683	11658	17025	18399	8343	10056
26-35 տարեկան	80225	26713	53512	58013	19885	38128
36-63 տարեկան	156914	51655	105259	134321	39398	94923
64 և ավելի	14092	5984	8108	12290	4990	7300

[12] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, միջազգային զբոսաշրջություն, https://www.armstat.am/am/?nid=14

[13] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-ապրիլին, ttps://www.armstat.am/file/article/sv_04_21a_421.pdf

[14] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին, ttps://www.armstat.am/file/article/sv_06_21a_421.pdf

[15] ՀՀ զբոսաշրջության կոմիտե, https://www.facebook.com/ArmeniaTourismCommittee/photos/pcb.1224558991301470/1224558631301506

[17] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին, ttps://www.armstat.am/file/article/sv_06_21a_421.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 4

ՀՀ ներգնա զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածությունն ըստ որոշ երկրների, 2020-2021 թթ.[18]

Ըստ քաղաքացիության	2020 թ. հունվար-հունիս Զբոսաշրջիկների թվաքանակը, մարդ	2020 թ. հունվար-հունիս Տեսակարար կշիռը, %	2021 թ. հունվար-հունիս Զբոսաշրջիկների թվաքանակը, մարդ	2021 թ. հունվար-հունիս Տեսակարար կշիռը, %	2021 թ. հունվար-հունիսը 2020 թ. հունվար-հունիսի նկատմամբ՝ ըստ զբոսաշրջիկների թվաքանակի, %
Ընդամենը՝	307590	100.0	239263	100.0	77.8
որից					
ՌԴ	121093	39.4	93537	39.1	77.2
Հայաստան	83050	27.0	59497	24.9	71.6
Իրանի Իսլամական Հանրապետություն	10925	3.6	26338	11.0	2.4 անգամ
Վրաստան	48204	15.7	20727	8.7	43.0
Ուկրաինա	5230	1.7	6920	2.9	132.3
ԱՄՆ	3448	1.1	6520	2.7	189.1
Ֆրանսիա	2169	0.7	2887	1.2	133.1
Բելառուս	1399	0.5	2100	0.9	150.1
Հնդկաստան	2879	0.9	1951	0.8	67.8
Գերմանիա	1677	0.5	1926	0.8	114.8
Արաբական Միացյալ Էմիրություններ	1510	0.5	1835	0.8	121.5

ըստ քաղաքացիության ՀՀ ներգնա զբոսաշրջիկները, որոնց տեսակարար կշիռը համեմատաբար մեծ է ընդհանուրում:

Այսպիսով՝ ՍԷԿՏ համակարգով ստացվող տեղեկություններն ավելի հարուստ են, քան նախորդ տարիներինը:

Աղյուսակ 5-ում դիտարկվել են 2019-2021 թթ. զբոսաշրջային այցելություններն ըստ եռամսյակների: 2021 թ. առաջին եռամսյակում ՀՀ է այցելել 86524 զբոսաշրջիկ, ինչը քիչ է 2019 թ. և 2020 թ. առաջին եռամսյակների համեմատ, իսկ երկրորդ եռամսյակում՝ 152739 (2019 թ. երկրորդ եռամսյակի 405566 զբոսաշրջիկի դիմաց, իսկ 2020 թ. երկրորդ եռամսյակում, ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 16-ի №298-Ն որոշման կատարմամբ[19] պայմանավորված, ՀՀ ներգնա զբոսաշրջային այցելություններ չեն արձանագրվել):

Դեռևս 2020 թ. սկզբին ՀՀ կառավա-

ԱՂՅՈՒՍԱԿ 5

ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակը 2019-2021 թթ.՝ ըստ եռամսյակների, մարդ[20]

Թվաքանակ / տարի	2019 եռ. 1	2019 եռ. 2	2019 եռ. 3	2019 եռ. 4	2020 եռ. 1	2020 եռ. 2	2020 եռ. 3	2020 եռ. 4	2021 եռ. 1	2021 եռ. 2
Ժամանել են ուղևորներ, որոնք, ըստ ՋՀԿ մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկներ	364,489	405,566	689,097	435,225	311,264	-	16,471	47,481	86,524	152,739
Մեկնել են ուղևորներ, որոնք, ըստ ՋՀԿ մեթոդաբանության, համարվում են զբոսաշրջիկներ	317,891	366,917	627,474	555606	275,716	-	10,511	59,866	44,574	70,972

[18] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին, https://www.armstat.am/file/article/sv_06_21a_421.pdf

[19] ՀՀՊՏ 2020.03.16/ Հատուկ թողարկում 257.5, ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին, 16-ը մարտի, 2020 թ., N298-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140212

[20] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին եռամսյակային հրապարակումներ, 2019-2021 թթ., աղբյուրը՝ https://www.armstat.am

ությունն իրականացրեց ճանապարհորդությունների սահմանափակման, օտարերկրացիների մուտքը դեպի ՀՀ արգելելու քայլեր, հայտարարեց արտակարգ դրություն, ընդունեց COVID-19-ի հետևանքների հակազդման միջոցառումների համապարփակ ծրագիր[21] և տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների փաթեթներ, որոնցից որոշների շահառու են նաև զբոսաշրջության ոլորտի կազմակերպություններն ու աշխատողները[22]:

2021 թ. մայիսի 17-ին փոփոխություններ կատարվեցին ՀՀ մուտք գործելու ընթացակարգում, ըստ որի՝ երկիր մուտք գործելիս պետք է ներկայացվի կամ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող՝ առավելագույնը 72 ժամ վաղեմության, կամ կորոնավիրուսային հիվանդության դեմ ամբողջական պատվաստման (երկու դեղաչափ, երկրորդ դեղաչափը՝ երկիր մուտք գործելու օրվանից նվազագույնը 14 օր առաջ) մասին հավաստող սերտիֆիկատ: Ընդորում, սկզբնական փուլում բացասական թեստի կամ պատվաստման սերտիֆիկատ չէր պահանջվում մինչև 1[23], իսկ սեպտեմբերի 6-ից սկսած՝ մինչև 6 տարեկան երեխաների համար:

Զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերն ու ելքերն արտացոլվում են վճարային հաշվեկշռում: 2019 թ. վճարային հաշվեկշռում զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը կազմել է 1534.9 մլն ԱՄՆ դոլար (2018 թ. հունվար-դեկտեմբերին՝ 1340.6 մլն ԱՄՆ դոլար), իսկ ներմուծմանը՝ 1433.6 մլն ԱՄՆ դոլար (2018 թ. հունվար-դեկտեմբերին՝ 1228.2 մլն ԱՄՆ դոլար): 2020 թ. զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը կազմել է 292,4 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է 1242.5 մլն ԱՄՆ դոլարով (աղյուսակ 6): 2021 թ. առաջին եռամսյակում զբոսաշրջային ծառայությունների արտահանման ծավալը կազմել է 35,3 մլն ԱՄՆ դոլար (2020 թ. առաջին եռամսյակում՝ 227,3 մլն ԱՄՆ դոլար)[24]:

ԱՂՅՈՒՍԱԿ 6

ՀՀ վճարային հաշվեկշռի որոշ ցուցանիշներ, 2019-2021 թթ., մլն ԱՄՆ դոլար[25]

Ցուցանիշ	2019 եռ. 1	2019 եռ. 2	2019 եռ. 3	2019 եռ. 4	2019	2020 եռ.1	2020 եռ. 2	2020 եռ. 3	2020 եռ. 4	2020	2021 եռ.1
Ճանապարհորդություն	28.9	32.1	43.3	-64.9	39.3	15.6	-7.8	-7.8	-14.2	-14.3	9.0
կրեդիտ	268.7	315.4	561.1	382.7	1,528.0	227.6	5.9	15.4	43.9	292.8	32.9
դեբետ	239.9	283.3	517.9	447.6	1,488.7	212.0	13.7	23.3	58.1	307.1	24.0
Գործնական	-22.5	-26.4	-36.4	-25.3	-110.6	-20.3	-7.8	-11.1	-10.2	-49.5	-7.3
կրեդիտ	24.0	30.1	53.7	41.2	149.1	20.0	5.9	8.2	6.0	40.1	4.2
դեբետ	46.5	56.5	90.1	66.5	259.6	40.3	13.7	19.3	16.2	89.6	11.4
Անձնական	51.3	58.5	79.6	-39.6	149.9	35.9	-	3.3	-3.9	35.2	16.2
կրեդիտ	244.7	285.3	507.4	341.5	1,378.9	207.5	-	7.3	37.9	252.7	28.8
դեբետ	193.4	226.8	427.8	381.1	1,229.0	171.7	-	4.0	41.8	217.4	12.5
Ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայություններ	32.4	47.0	64.1	-42.2	101.3	20.8	-2.6	-0.3	-7.2	10.7	14.5
կրեդիտ	268.7	317.8	564.6	383.8	1,534.9	227.3	4.8	16.1	44.2	292.4	35.3
դեբետ	236.3	270.9	500.4	426.0	1,433.6	206.6	7.4	16.4	51.4	281.7	20.9

[21] ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N354 – Լ որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf

[22] Թովմասյան Գ., «COVID-19»-ի բացասական ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», N1, 2020, էջ 153-171, Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Եր., «Մեկնարկ» ՍՊԸ, 2020, էջ 107-120:

[23] ՀՀ մուտք գործելու ընթացակարգում փոփոխությունների վերաբերյալ, https://www.mfa.am/hy/COVID-19/2021/05/17/covid-19/10955?fbclid=IwAR31BTPmRghd2nZ568ZeBcZYQwOTGpzAm3BvTjRkmzqSugMPAp_-VHNcubM

[24] ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

[25] Նույն տեղում:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին մեծացել էր նաև ՀՀ ներքին զբոսաշրջիկների թիվը: 2019 թ. դա կազմել է 1544600 մարդ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 41.4%-ով: Ներքին զբոսաշրջիկների մեծ մասի նպատակը եղել է հանգիստն ու ժամանցը (72%): 2020 թ.-ին, համավարակով պայմանավորված, նախորդ տարվա համեմատ այդ թիվը մոտ 33%-ով նվազել է՝ կազմելով 1045756: Իսկ ներքին զբոսաշրջիկների շուրջ 73%-ի նպատակը եղել է նույնը՝ հանգիստ ու ժամանց:

2021 թ. առաջին կիսամյակում ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 216130 մարդ՝ 2020 թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 54,2%-ով (աղյուսակ 7):

Համավարակի, ճանապարհորդության միջազգային սահմանափակումների պարագայում շատերը գերադասում են հանգստանալ ՀՀ զբոսաշրջային դեստինացիաներում, ուստի կարելի է ակնկալել, որ ներքին զբոսաշրջությունը հետագայում նույնպես կշարունակի ակտիվանալ: Իհարկե, դրա համար հարկ է իրականացնել մեծ աշխատանք՝ դիտարկելով նաև զբոսաշրջիկի հոգեբանությունը. շատ զբոսաշրջիկներ ապահով են զգում իրենց երկրի սահմաններում, քան արտերկրում, քանի որ վտանգի պարագայում կարող են ավելի հեշտ ու արագ կերպով օգտվել համապատասխան բժշկական ծառայություններից:

Ըստ վիճակագրական տվյալների՝ կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը 2021 թ. առաջին կիսամյակում կազմել է 72239.2 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 67.3 %-ով (աղյուսակ 8):

Այսպիսով՝ կարելի է ասել, որ 2021 թ. առաջին կիսամյակի ընթացքում զբոսա-

ԱՂՅՈՒՍԱԿ 7

ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակն ըստ եռամսյակների, 2019-2021 թթ.[26]

Թվաքանակ/ տարի	2019 թ.				2020 թ.				2021 թ.	
	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.	1-ին եռ.	2-րդ եռ.
Ներքին զբոսաշրջիկների թվաքանակը	158672	76784	1169940	139204	139619	539	794823	110775	150272	65858

ԱՂՅՈՒՍԱԿ 8

Զբոսաշրջային որոշ ծառայությունների կազմակերպման ծավալը, 2020-2021 թթ.[27]

	2020 թ. հունվար-հունիս, ընդամենը՝ մլն դրամ, ընթացիկ գներով	2021 թ. հունվար-հունիս, ընդամենը՝ մլն դրամ, ընթացիկ գներով	2021 թ. հունվար-հունիս՝ 2020 թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Կացության և հանրային սննդի կազմակերպում, *այդ թվում՝*	43173.7	72239.2	167.3
կացության կազմակերպում	6859.9	10643.9	155.1
հանրային սննդի կազմակերպում	36313.8	61595.3	169.6
Զբոսաշրջային գործակալությունների և օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ	2348.8	3979.5	169.4

[26] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-ապրիլին, էջ 112, https://www.armstat.am/file/article/sv_04_20a_422.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հուլիսին, էջ 114, https://www.armstat.am/file/article/sv_07_20a_422.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հոկտեմբերին, էջ 122, https://www.armstat.am/file/article/sv_10_20a_422.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_422.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հուլիսին, էջ 118, https://armstat.am/file/article/sv_07_21a_422.pdf

[27] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին, էջ 48-50, https://www.armstat.am/file/article/sv_06_21a_126.pdf, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին, էջ 49-51, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_126.pdf

շրջության ոլորտը որոշ չափով աշխուժացել է:

Չնայած ամբողջ աշխարհում COVID-19-ի դեմ իրականացվում են պատվաստումներ, համավարակը դեռևս չի նահանջել: Ի հայտ եկող նոր շտամները վկայում են, որ առաջիկա տարիներին պետք է շարունակենք ապրել այս պայմաններում: Աշխարհի մի շարք երկրներ կրկին իրականացնում են խիստ սահմանափակումներ, չեն տրամադրում կամ որոշ պայմանների բավարարման դեպքում են տրամադրում զբոսաշրջային վիզա, իսկ զբոսաշրջային կազմակերպություններն աշխատում են սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմամբ: Այս ամենը վկայում է, որ ներքին զբոսաշրջությունը միջազգայինի համեմատ առաջիկա տարիներին կշարունակի ավելի նախընտրելի լինել աշխարհում:

Համավարակի առումով, Հայաստանը մի շարք երկրների համար ներկայում «ապահով» ցուցակում չէ, այսինքն՝ ՀՀ քաղաքացիների դեպքում գործում են այլ երկրների մուտքի սահմանափակումներ, ինչը նույնպես ներքին զբոսաշրջության զարգացման ազդակ կարող է լինել: Մյուս կողմից էլ՝ համավարակի պայմաններում ճանապարհորդելը դժվար է, քանի որ ոչ բոլորն են ցանկանում դիմակ կրել, նախապես պատվաստվել կամ թեստ հանձնել կամ էլ վարակվել ու հիվանդանալ այլ երկրներում, հետևաբար՝ երկրի ներսում հանգստանալու հակվածությունն ավելի է մեծանում: Միաժամանակ, Հայաստանում COVID-19-ով հիվանդացության բարձր տեմպերը, պատվաստումների ցածր ցուցանիշը բացասաբար են անդրադառնում ՀՀ կերպարի վրա, ուստի, ներգնա զբոսաշրջության առումով, մեր երկիրն այնքան էլ նախընտրելի զբոսաշրջային վայր չի համարվում: Հոդվածում ներկայացված տվյալները վկայում են, որ ՀՀ-ում ներգնա զբոսաշրջությունից եկամուտները մի քանի անգամ գերազանցում են ներքին զբոսաշրջությունից ստացվածը: Հաշվի առնելով այս ամենը՝ հարկ է մի կողմից խթանել ներքին զբոսաշրջությունը՝ տնտեսական ակտիվություն ապահովելու համար, իսկ մյուս կողմից՝ քայլեր ձեռնարկել ներգնա զբոսաշրջության զարգացման նպատակով, ապահովել պատվաստումների բարձր ցուցանիշ, հիվանդացության ցածր մակարդակ, մարքեթինգային միջոցառումների շնորհիվ՝ ՀՀ-ն ներկայացնել որպես անվտանգ և ոչ զանգվածային զբոսաշրջության երկիր: Իսկ ներքին զբոսաշրջության խթանման համար կարելի է նաև որոշակի գումարի սահմաններում թողարկել հատուկ վաուչերներ (դիցուք՝ 10000 դրամի զբոսաշրջային քարտ կամ վաուչեր)՝ տրամադրելով բազմազավակ, սոցիալապես անապահով ընտանիքներին և նրանց, որոնց ամսական եկամուտը նվազագույն աշխատավարձի չափ է, ինչպես նաև բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ՀՀ-ում ներքին տուրերից, հյուրանոցային, հանրային սննդի կազմակերպությունների ծառայություններից օգտվելու նպատակով: Սա մի կողմից կնպաստի երկրի ներսում հանգստի կազմակերպմանը, իսկ մյուս կողմից էլ կխթանի զբոսաշրջային կազմակերպությունների գործունեությունը և տնտեսական ակտիվությունը:

Զբոսաշրջությունն էական նշանակություն ունի մեր երկրի սոցիալ-տնտեսական համակարգում, ուստի ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացման համար, վերոնշյալից բացի, անհրաժեշտ է իրականացնել մարքեթինգային տարբեր միջոցառումներ, մասնավորապես՝ համացանցով և սոցիալական ցանցերով տարածել գովազդ, մշակել տուրփաթեթներ՝ ներառելով զբոսաշրջության տարբեր տեսակներ՝ ռեկրեացիոն, կրոնական, դեպի սրբավայրեր ուխտագնացության, էկո-, ագրո-, գաստրոնոմիական, սպորտային, արկածային, իրադարձային և այլն: ՀՀ-ում կան զբոսաշրջային գրավչությամբ բազում վայրեր, որոնք կարելի է ընդգրկել երթուղիներում: Կարևոր է նաև ավանդական մարքեթինգին փոխարինող գործիքակազմի կիրառումը՝ Influencer, Word of mouth և այլն: Հայաստանը պետք է պատկերել որպես անվտանգ երկիր՝ բազմազան նախասիրություններ և հետաքրքրություններ ունեցող զբոսաշրջիկների համար ներկայացնելով տարբերակված առաջարկներ՝ հիմնված զբոսաշրջային հարուստ ռեսուրսային ներուժի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան Գ., «COVID-19»-ի բացասական ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», N1, 2020, էջ 153-171:
2. Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Եր., «Մեկնարկ» ՍՊԸ, 2020:
3. ՀՀ զբոսաշրջության կոմիտե, https://www.facebook.com/ArmeniaTourismCommittee/photos/pcb.1224558991301470/1224558631301506
4. ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, 12-ը ապրիլի, 2018 թ., N14, «Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումներին հավանություն տալու մասին», http://www.irtek.am/views/act.aspx?aid=94631
5. ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N354 – Լ որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/03/354-%D4%BC.pdf
6. ՀՀՊՏ 2020.03.16/ Հատուկ թողարկում 257.5, ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին, 16-ը մարտի, 2020 թ., N298-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140212
7. ՀՀ մուտք գործելու ընթացակարգում փոփոխությունների վերաբերյալ, https://www.mfa.am/hy/COVID-19/2021/05/17/covid-19/10955?fbclid=IwAR31BTPmRghd2nZ-568ZeBcZYQwOTGpzAm3BvTjRkmzqSugMPA-p_-VHNcubM
8. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_421.pdf
9. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-ապրիլին, https://www.armstat.am/file/article/sv_04_20a_422.pdf
10. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_126.pdf
11. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հուլիսին, https://www.armstat.am/file/article/sv_07_20a_422.pdf
12. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հոկտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_10_20a_422.pdf
13. ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_421.pdf
14. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_422.pdf, https://www.armstat.am/file/article/sv_06_21a_126.pdf
15. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-ապրիլին, https://www.armstat.am/file/article/sv_04_21a_421.pdf
16. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին, https://www.armstat.am/file/article/sv_06_21a_421.pdf
17. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հուլիսին, էջ 118, https://armstat.am/file/article/sv_07_21a_422.pdf
18. ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, միջազգային զբոսաշրջություն, https://www.armstat.am/am/?nid=14
19. ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
20. Armenia 2021, Annual research: Key highlights, p. 1, https://wttc.org/Research/Economic-Impact
21. GLOBAL ECONOMIC IMPACT & TRENDS 2021, WORLD TRAVEL & TOURISM COUNCIL, https://wttc.org/Portals/0/Documents/Reports/2021/Global%20Economic%20Impact%20and%20Trends%202021.pdf?ver=2021-07-01-114957-177
22. Tourism Towards 2030 / Global Overview, Advance edition presented at UNWTO 19th General Assembly – 10 October 2011, p. 15, https://www.globalwellnesssummit.com/wp-content/uploads/Industry-Research/Global/2011_UNWTO_Tourism_Towards_2030.pdf
23. UNWTO World Tourism Barometer and Statistical Annex, January 2020,18(1), p. 1, https://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.1
24. World Tourism Barometer, Volume 18, Issue 5, August/September 2020, UNWTO, pp. 1, 5, 21, https://www.e-unwto.org/doi/epdf/10.18111/wtobarometereng.2020.18.1.52020:
Worst year in tourism history with 1 billion fewer international arrivals, https://www.unwto.org/news/2020-worst-year-in-tourism-history-with-1-billion-fewer-international-arrivals

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ТЕНДЕНЦИИ ВОЗОБНОВЛЕНИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ В 2021 ГОДУ

Из-за пандемии COVID-19 туристический сектор понес значительные убытки во всем мире. В 2020 году общий вклад туризма в ВВП Армении составил 216,8 млрд драмов или 446,9 долларов США (3.4% ВВП), сократившись на 75% по сравнению с предыдущим годом. Туризм обеспечил 11,2% от общей занятости или 107400 рабочих мест, что на 22% меньше, чем в предыдущем году. В 2021 году туристическая сфера демонстрирует тенденции возобновления. Согласно статистике, в январе-июне 2021 года Армению посетило 239263 въезжающих туриста, а в январе-августе - 488558 туристов, а количество внутренних туристов в первом полугодии составило 216130 человек. Объем услуг по размещению и питанию в январе-июне 2021 года составил 72239.2 млн драмов, увеличившись на 67.3% по сравнению с предыдущим годом. Туризм играет важную роль в социально-экономической системе нашей страны, поэтому для развития въездного и внутреннего туризма необходимо осуществлять деятельность в разных направлениях: маркетинговые мероприятия, особенно через Интернет и социальные сети, разработка различных типов турпакетов и т. д.

Ключевые слова: *туризм, информационная система пограничного электронного управления, пандемия, организация услуг по размещению и питанию, платежный баланс*

Gayane TOVMASYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor

MARKETS AND COMPETITION

TOURISM RESTARTING TRENDS IN ARMENIA IN 2021

Due to the Covid-19 pandemic, tourism sector suffered significant losses around the world. In 2020, total contribution of tourism to GDP of Armenia was 216.8 billion AMD or 446.9 USD (3.4% of the GDP), decreasing by 75% as compared to the previous year. Tourism provided 11.2% of total employment or 107400 jobs, decreasing by 22% compared to the previous year. In 2021, tourism sphere shows resuming trends. According to statistics, in 2021 January-June 239263 inbound tourists visited Armenia in January-August - 488558 inbound tourists, and the number of domestic tourists in the first half of the year was 216130 people. The volume of accommodation and catering services was 72239. 2 million AMD in 2021 January-June, increasing by 67.3% as compared to the previous year. Tourism has an essential role in the socio-economic system of our country, so in order to promote inbound and domestic tourism, it is necessary to carry out activities in different directions: marketing events, especially through the Internet and social networks, development of various types of tour packages, etc.

Keywords: *tourism, electronic border management information system, pandemic, organization of accommodation and catering services, balance of payments*